

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ  
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

**ՈՐՈՇՈՒՄ**

№2020-1-2-Ա

ք. Երևան

16.01.2020թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2020 թվականի հունվարի 16-ի նիստում քննարկեց 2019 թվականի հոկտեմբերի 29-ին արտոնագրային հավատարմատար Սարգիս Կնյազյանի կողմից ներկայացված՝ Maarschall Group B.V. (Uiverweg 2 NL-1118 DS Schiphol, NL) ընկերության բողոքը (IR1419729) «NASTOYASCHAYA» ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան Հայաստանի Հանրապետությունում գրանցման հիման վրա պահպանվող շփոթելու աստիճան նման «"НАСТОЯЩАЯ" ("Gruppa kompaniy "Spirtnoy", société à responsabilité limitée 1-y Magistralny tupik, 5A, of. 23B, RU-123290 MOSCOU (RU) IR 1175675 ) և "НАСТОЯЩАЯ" (Société à responsabilité limitée «Tchestnaya Vodotchnaya Kompaniya» oul. Professionalnaya, 177, k. 2, Moskovskaya oblast, RU141800 Dmitrov (RU) IR 1224041) ապրանքային նշանների առկայության պատճառով:

Կոլեգիայի նախագահը հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ բավարարելու, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանը գրանցելու մասին, քանի որ հայտատուն

ներկայացրել է նամակ համաձայնագրեր հակադրվող ապրանքային նշանների իրավատերերի կողմից:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ ներկայացված նամակ համաձայնագրերի առկայության դեպքում հայտարկված ապրանքային նշանը ենթակա է գրանցման:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

Արտոնագրային հավատարմատար Սարգիս Կնյազյանի կողմից ներկայացված բողոքն ամբողջությամբ բավարարել, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչել և «NASTOYASCHAYA» (IR1419729) ապրանքային նշանը գրանցել:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

**ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ  
ՆԱԽԱԳԱՀ**

**ՆԱԻՐԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ**